ԿՌԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

Վարքագծի կանոններ

Նախաբան

Սույն վարքագծի կանոնները սահմանում են այն սկզբունքներն ու չափորոշիչները, որոնցով առաջնորդվում են Կանանց ռեսուրսային կենտրոնի (ԿՌԿ) բոլոր անդամներն իրենց վարքագծում, ներառյալ անձնակազմը, կամավորները, պայմանագրային աշխատակիցները, շահառուները, դասընթացի մասնակիցները և գործընկերները: Որպես ֆեմինիստական կազմակերպություն՝ մենք ձգտում ենք ստեղծել հավասարության, հարգանքի և զորեղացման մթնոլորտ՝ միաժամանակ ապահովելով բոլորի անվտանգությունն ու արժանապատվությունը:

1. Նպատակ

Սույն վարքագծի կանոնների նպատակն է՝

- նպաստել հարգալից, ներառական և ապահով աշխատանքային միջավայրի ստեղծմանը,
- սատարել ֆեմինիստական սկզբունքներին և արժեքներին, որոնք առաջնորդում են մեր առաքելությունը,
- սահմանել վարքագծի հստակ չափորոշիչներ ԿՌԿ-ին փոխկապակցված բոլոր աշխատակիցների համար:

2. Կիրառման շրջանակը

Սույն վարքագծի կանոնները վերաբերում են ԿՌԿ-ի բոլոր աշխատակիցներին, կամավորներին, փորձնակներին, խորհրդատուներին, պայմանագրային աշխատակիցներին և գործընկեր կազմակերպություններին: Այն սահմանում է վարքագծային կանոններ բոլոր այն վայրերում, որտեղ ԿՌԿ-ն գործունեություն է ծավալում, ներառյալ գրասենյակները, ծրագրային տարածքները և առցանց տարածությունները:

3. Հիմնարար սկզբունքներ

I. **Հարգանք և արժանապատվություն.** հարգանքով վերաբերվել բոլոր մարդկանց՝ գնահատելով բազմազանությունը և նպաստելով ներառականությանը:

II. **Հակախտրականություն.** ապահովել, որ ոչ ոք խտրականության չենթարկվի իր գենդերի, տարիքի, ռասայի, էթնիկ պատկանելության, դավանանքի,

հաշմանդամության, սեռական կողմնորոշման կամ այլ անձնական հատկությունների պատճառով:

III. **Հաշվետվողականություն.** ինքներս մեզ և ուրիշներին հաշվետու պահել՝ վարքագծի էթիկական չափանիշներին համապատասխանելու համար:

IV. **Զորեղացում**. պարտավորվել մեր աշխատանքի բոլոր ասպեկտներում մարգինալացված անձանց, հատկապես կանանց և աղջիկների ձայները լսելի դարձնելուն:

V. **Պաշտպանություն**. ակտիվորեն կանխել և արձագանքել վնասի, ոտնձգությունների կամ շահագործման ցանկացած ձևի:

4. Արգելված վարք

Ստորև թվարկված գործողությունները խստիվ արգելված են և կարող են հանգեցնել կարգապահական տույժերի, ներառյալ աշխատանքից հնարավոր ազատում կամ իրավական հետևանքներ:

I. **Խտրականություն և ոտնձգություն**

- Խտրականության ցանկացած ձևի դրսևորում՝ ելնելով գենդերից, տարիքից, ռասայից, դավանանքից, հաշմանդամությունից, սեռական կողմնորոշումից կամ որևէ այլ պաշտպանված հատկանիշից:
- Նվաստացուցիչ դիտողություններ, վիրավորական կատակներ կամ անպատշաճ մեկնաբանություններ թողնելն անձի արտաքին տեսքի, ինքնության կամ ծագման վերաբերյալ:

II. **Բուլինգ և ահաբեկում**

- Ցանկացած վարքագիծ, որը նվաստացնում, նսեմացնում կամ ահաբեկում է գործընկերներին:
- Իշխանության չարաշահում ՝ այլ անձանց հարկադրելու, սպառնալու կամ շահարկելու նպատակով:

III. **Շահագործում և չարաշահում**

- Պաշտոնեական դիրքի օգտագործումը շահառուներին, գործընկերներին կամ կամավորներին անձնական շահի նպատակով շահագործելու համար, ներառյալ ֆինանսական, սեռական կամ այլ ծառայություններ:
- Սեռական շահագործման, ոտնձգությունների կամ չարաշահումների իրականացնելը կամ աջակցելը:
- Օգնության, ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքի դիմաց սեռական ծառայություններ մատուցելու (բարեհաճության) դրդելը կամ իրականացնելը:
- Շահառուներին կամ կամավորներին հյուրանոցային սենյակներում, բարերում կամ այլ տարածքներում մասնավոր հանդիպումների հրավիրելը կամ նրանց ալկոհոլ կամ հոգեակտիվ նյութեր առաջարկելը:
- Շահառուների հետ սեռական հարաբերություններ ունենալն այն դեպքում, երբ դա իրականացվում է իշխանության չարաշահման, հարկադրանքի կամ շահագործման պայմաններում:
- Անչափահասների (մինչև 18 տարեկան) հետ սեռական հարաբերությունների մեջ մտնելը ՝ անկախ ՀՀ օրենսդրական կարգավորումներից: Տարիքը չիմանալը արդարացում չէ:

IV. **Շահերի բախում**

- Գործողությունների կամ փոխհարաբերությունների մասնակցություն, որոնք հակասում են ԿՌԿ-ի առաքելությանը, արժեքներին կամ նպատակներին:
- Անձնական հարաբերությունները կամ փոխկապակցվածությունը չբացահայտելը, եթե սա կարող է ազդել վերջինիս անաչառության վրա:

V. **Գաղտնիության խախտում**

- Կազմակերպության կամ շահառուների վերաբերյալ գաղտնի տեղեկատվության բացահայտում՝ առանց համապատասխան թույլտվության:

VI. **Լիազորությունների չարաշահում**

- Օգտագործել պաշտոնը՝ գործընկերներին, կամավորներին կամ շահառուներին մանիպուլացնելու, վատ վերաբերվելու կամ նրանց վրա ազդեցությունը շահարկելու համար:

VII. **Թմրանյութերի չարաշահում**

- Աշխատանքային ժամերին կամ աշխատանքի հետ կապված ցանկացած այլ միջավայրում թմրանյութերի կամ ալկոհոլի ազդեցության տակ գտնվելը:

VIII. **Խախտումները խթանելը կամ թաքցնելը**

- Անօրինական գործողությունների, այդ թվում ՝ սեռական շահագործման և չարաշահման թաքցմանը նպաստելը կամ անտեսելը:

IX. **Ռեսուրսների ոչ պատշաճ օգտագործում**

- Կազմակերպության միջոցների, ակտիվների կամ ռեսուրսների ոչ նպատակային օգտագործումը՝ անձնական օգուտի համար:
- Սարքավորումների կամ շինությունների չթույլատրված օգտագործումը:

X. **Իրավախախտումների և վրիժառության մասին հաղորդման ձախողումը**

- Սեռական շահագործման և չարաշահման քաղաքականության ու վարքագծի կանոններով դիտարկված խախտումները չհաղորդելը կամ թաքցնելը:
- Վրիժառու գործողություններ ձեռնարկել այն անձանց նկատմամբ, որոնք հայտնում են խնդիրների մասին կամ մասնակցում են հետաքննություններին, ներառյալ վերապրածները, վկաները և ազդարարողները:

XI. **Խեղաթյուրում**

Կեղծ տեղեկատվության տրամադրում կամ կազմակերպությանը կեղծ լույսի ներքո երրորդ անձանց ներկայացնելը:

XII. **ՀՀ օրենսդրության խախտումներ**

Անօրինական կամ տեղական օրենքները խախտող գործունեության ծավալում:

XIII. **Ֆեմինիստական սկզբունքների խաթարում**

Մասնագիտական փոխազդեցություններում ֆեմինիստական արժեքների անտեսում, ներառյալ՝ գենդերային հավասարությունը, հարգանքը և ներառականությունը:

XIV. **Լրացուցիչ պահանջներ ԿՌԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումների դասընթացավարներին**

Դասընթացավարները պետք է պահպանեն հետևյալ էթիկական և մասնագիտական չափանիշները.

- Կիրառել գենդերազգայուն մոտեցում և համոզվել, որ ուսումնական նյութերը չեն պարունակում խտրական ձևակերպումներ:

- Հարգել մասնագիտական սահմանները և զերծ մնալ առանձին մասնակիցների հետ չնախատեսված վայրերում առերես հանդիպումներից:
- Դասընթացավարների և մասնակիցների միջև բոլոր փոխազդեցությունները պետք է տեղի ունենան նախատեսված ընդհանուր տարածքներում:
- Դասընթացավարներն իրավասու են հեռացնել մասնակիցներին, որոնք կոպտորեն խախտում են սույն վարքագծի կանոնները. այդ դեպքում նրանք պետք է անհապաղ զեկուցեն նման միջադեպերի մասին Սեռական շահագործման և չարաշահման քաղաքականության համակարգողին:

5. Վարքագծի պահանջներ

- **Պրոֆեսիոնալիզմ.** պահպանել պրոֆեսիոնալիզմի, ազնվության և անկաշառության բարձր մակարդակ բոլոր գործողություններում:
- **Համագործակցություն.** գործընկերների և համայնքների հետ աշխատել կառուցողական և հարգալից ոճով:
- **Գաղտնիություն.** հարգել շահառուների, անձնակազմի և կազմակերպության տեղեկատվության գաղտնիությունը:
- **Խախտումների մասին հաղորդումներ.** անհապաղ զեկուցել սույն վարքագծի կանոնների ցանկացած խախտման կամ միջադեպերի մասին, որոնք վտանգում են կազմակերպության բարի համբավն ու հեղինակությունը:

---

6. Զեկուցման մեխանիզմներ

Կանանց ռեսուրսային կենտրոնը խրախուսում է բաց և թափանցիկ մշակույթ, որտեղ մարդիկ իրենց ապահով են զգում՝ հաղորդելով իրենց խնդիրները և չվախենալով վրիժառու պատասխան գործողություններից:

- Չարաշահման մասին հաղորդումները կարող են փոխանցվել Սեռական շահագործման և չարաշահման քաղաքականության համակարգողին:
- Բոլոր հաղորդումները կմշակվեն գաղտնիության և նրբանկատության սկզբունքներով՝ ապահովելով ներգրավված անձանց անվտանգությունն ու բարեկեցությունը:

---

7. Հաշվետվողականություն և կարգապահական միջոցներ

- Սույն կանոնների խախտումները հանգեցնում են համապատասխան կարգապահական միջոցների կիրառման, որոնք կարող են ներառել բանավոր նախազգուշացումներ, գրավոր նախազգուշացումներ, անդամակցության կասեցում կամ աշխատանքային հարաբերությունների կամ գործընկերության դադարեցում:
- Լուրջ խախտումների դեպքում կարող են կիրառվել նաև օրենքով սահմանված միջոցառումներ:

---

8. Բարենպաստ մթնոլորտի ստեղծում

- **Ղեկավարության պատասխանատվություն.** տնօրենները և թիմերի համակարգողները պետք է էթիկական վարքագծի օրինակ ծառայեն և խրախուսեն ներառականությունն ու ապահովեն սույն վարքագծի կանոններին հետևելը:

- **Վերապատրաստում և իրազեկում.** պարբերաբար վերապատրաստման դասընթացներ կանցկացվեն՝ համոզվելու, որ ամբողջ անձնակազմը ծանոթ է վարքագծի կանոններին և համապատասխան քաղաքականություններին:
- **Հետադարձ կապի մեխանիզմներ.** աշխատակիցներին և շահառուներին խրախուսվում է հետադարձ կապ տրամադրել կազմակերպության մշակույթի և պրակտիկաների վերաբերյալ՝ շարունակական բարելավման նպատակով:

---

9. Ընդունում և պարտավորություն

Ստորագրելով ներքևում՝ Դուք համաձայնում եք պահպանել Կանանց ռեսուրսային կենտրոնի արժեքներն ու սկզբունքները և գործել սույն փաստաթղթում սահմանված չափանիշներին համապատասխան: